# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՄԱՐՏԻ 2026թվականի N 406

## ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Տիգրան Արտակի Խաչատրյանը, հանդիսանալով գույքահարկի հարկ վճարող սուբյեկտ, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի հիմքով Իջևանի համայնքապետարանի աշխատակազմում 24.02.2026թ հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները՝ վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Համաձայն՝ Իջևանի համայնքապետարանի Ֆինանսատնտեսական, հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված տեղեկատվության, ՀՀ Հարկային օրենսգրքի 242-րդ հոդվածով սահմանված գույքահարկի հարկով հարկվող օբյեկտ համարվող ավտոմոբիլային փոխադրամիջոցը հանդիսանում է քաղաքացի Տիգրան Արտակի Խաչատրյանի սեփականությունը, ինչը Հարկային օրենսգրքով հանդիսանում է հարկվող օբյեկտ:
Գույքի համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 437.291 /Չորս հարյուր երեսունյոթ հազար երկու հարյուր իննսունմեկ/ ՀՀ դրամ, ինչը մինչև 2025թ ընկած ժամանակահատվածը չի վճարվել՝ ներառյալ գույքահարկի գումարի վճարման պարտավորությունը չկատարելու արդյունքում առաջացած տույժը:

Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 04.03.2026թ ժամը 14:40-ին հրավիրվել է վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք 551660401 փոստ. Անդորրագիր / քաղաքացի Տիգրան Արտակի Խաչատրյանին:

Վերջինս չէր ներկայացել վարչական վարույթի լսումներին:

**Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:
Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 239-րդ հոդվածի՝ փոխադրամիջոցների գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող

փոխադրամիջոցների համար սույն բաժնում սահմանված կարգով և չափով ՀՀ համայնքների բյուջե վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

240-րդ հոդվածի համաձայն փոխադրամիջոցների գույքահարկ վճարողներ են համարվում կազմակերպությունները և ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի:

ՀՀ Հարկային օրենսգրքի 251-րդ հոդվածի համաձայն .

Կազմակերպությունները և ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարները (այդ թվում՝ Օրենսգրքի 246-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված դեպքերում և կարգով հաշվարկված գույքահարկի պարտավորության գումարները) իրենց պետական գրանցման (հաշվառման) վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները:

ՀՀ Հարկային օրենսգրքի համաձայն հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ:

ՀՀ Հարկային օրենսգրքի 43-րդ հոդվածի համաձայն.

1.Հարկային պարտավորություն է համարվում որևէ տեսակի հարկի և վճարի, ինչպես նաև օրենսգրքի և վճարների վերաբերյալ ՀՀ օրենքների դրույթները խախտելու համար հաշվարկված՝ Օրենսգրքով և վճարների վերաբերյալ ՀՀ օրենքներով սահմանված տույժերի, տուգանքների, ինչպես նաև վնասի հատուցման գումարներ վճարելու՝ հարկ վճարողի պարտավորությունը:
«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի համաձայն համայնքապետը օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձում: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակատավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահանդրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Հարկային օրենսգրքի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ , 58-60-րդ հոդվածներով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Քաղաքացի Տիգրան Արտակի Խաչատրյանից հօգուտ Իջևան համայնքի բյուջե գանձել 437.291 /Չորս հարյուր երեսունյոթ հազար երկու հարյուր իննսունմեկ/ ՀՀ դրամ, որպես AUDI A6 2.7 BITURBO QUATTRO 36RC990 պատհամարանիշով ավտոմոբիլային փոխադրամիջոցի համար վճարման ենթակա գույքահարկի գումար

2.Տուգանքի գումարն որոշումը ստանալու օրվանից ոչ ուշ քան 15 օրվա ընթացքում կամովին վճարել քաղաքապետարանի գանձապետական թիվ 900375121036 հաշվին

3.Սույն որոշման մասին եռօրյա ժամկետում առձեռն կամ փոստային առաքմամբ, ստացումը հավաստող հետադարձ ծանուցմամբ իրազեկել Տիգրան Խաչատրյանին

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկման հաջորդ օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում

zdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու օրվանից հինգ օր հետո:

5.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

6.Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին կամ դատական կարգով՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում, այն ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում, չբողոքարկելու դեպքում, նույն ժամկետում դառնում է անբողոքարկելի և ենթակա է հարկադիր կատարման

7.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

04 ՄԱՐՏԻ 2026 թ.
ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՄԱՐՏԻ 2026թվականի N 407

## ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ /ԾԱԾԿԱԳԻՐ 2.3-2/ ԱՆՁՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Համայնքային ծառայության մասին» օրենքի թիվ 10-րդ հոդվածի 3-րդ մասով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսություն և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետի 2.3-2 ծածկագրով համայնքային ծառայության պաշտոնի փոփոխված անձնագիրը /հավելված 1/:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

04 ՄԱՐՏԻ 2026 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՄԱՐՏԻ 2026թվականի N 408

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԳԵՏԱՀՈՎԻՏ 11-ՐԴ ՓՈՂՈՑ, 17 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.44675ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Տավուշի մարզի Իջևան համայնքի Գետահովիտ բնակավայրում գտնվող բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.44675հա մակերեսով հողամասից /վկայական 16052019-11-0019, ծածկագիր 11-022-0013-0001/ առանձնացնել 0.35336հա մակերեսով և 0.09339հա մակերեսով անշարժ գույք և տալ հասցեավորում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 97-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Տավուշի մարզի, Իջևան համայնքի, Գետահովիտ բնակավայրում գտնվող բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.44675հա մակերեսով հողամասից /վկայական 16052019-11-0019, ծածկագիր 11-022-0013-0001/ համապատասխանաբար առանձնացված 0.35336հա մակերեսով անշարժ գույքին տալ հետևյալ հասցեն՝ Տավուշի մարզ, համայնք Իջևան, գյուղ Գետահովիտ 11-րդ փողոց, 17 բնակելի տուն:

2.Տավուշի մարզի, Իջևան համայնքի, Գետահովիտ բնակավայրում գտնվող բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.44675հա մակերեսով հողամասից /վկայական 16052019-11-0019, ծածկագիր 11-022-0013-0001/ համապատասխանաբար առանձնացված 0.09339հա մակերեսով անշարժ գույքին տալ հետևյալ հասցեն՝ Տավուշի մարզ, համայնք Իջևան, գյուղ Գետահովիտ 17-րդ փողոց, 37 հողամաս:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

**ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԾԱՂԱՐՅԱՆ**

04 ՄԱՐՏԻ 2026 թ.
ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՄԱՐՏԻ 2026թվականի N 409

## 12.12.2025.Թ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԻՎ 1610 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12.12.2025թ. համայնքի ղեկավարի թիվ 1610 որոշման մեջ առաջացել է փոփոխություն կատարելու անհրաժեշտություն:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլխի, թիվ 33 և թիվ 34 հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.12.12.2025թ. համայնքի ղեկավարի թիվ 1610 որոշումը կարդալ.

,,ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԱԶԱՏԱՄՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.06162ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԵՎ 11-005-0014-0009 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Տավուշի մարզի Իջևան համայնքի Ազատամուտ Ա. Հակոբյան 15 հասցեում գտնվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.06162հա մակերեսով հողամասից /ծածկագիր 11-005-0014-0009, վկայական 22022022-11-0024/ առանձնացնել 0.02162հա մակերեսով և 0.04հա մակերեսով անշարժ գույք և տալ հասցեավորում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 97-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման.

Տավուշի մարզի Իջևան համայնքի Ազատամուտ Ա. Հակոբյան 15 հասցեում գտնվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.06162հա մակերեսով հողամասից /ծածկագիր 11-005-0014-0009, վկայական 22022022-11-0024/ առանձնացնել 0.02162հա մակերեսով և 0.04հա մակերեսով անշարժ գույք և տալ հասցեավորում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 97-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Տավուշի մարզի, Իջևան համայնքի, Ազատամուտ Ա. Հակոբյան 15 հասցեում գտնվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.06162հա մակերեսով հողամասից /ծածկագիր 11-005-0014-0009, վկայական 22022022-11-0024/ համապատասխանաբար առանձնացված 0.02162հա մակերեսով անշարժ գույքի հասցեն թողնել նույնը. Տավուշի մարզ, համայնք Իջևան, գյուղ Ազատամուտ, Ա. Հակոբյան 15 բնակելի տուն:

2. Տավուշի մարզի, Իջևան համայնքի, Ազատամուտ Ա. Հակոբյան 15 հասցեում գտնվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.06162հա մակերեսով հողամասից /ծածկագիր 11-005-0014-0009, վկայական 22022022-11-0024/ համապատասխանաբար առանձնացված 0.04հա մակերեսով անշարժ գույքի հասցեն թողնել նույնը. Տավուշի մարզ, համայնք Իջևան, գյուղ Ազատամուտ, Ա. Հակոբյան 15/1հողամաս :

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:,,

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

04 ՄԱՐՏԻ 2026 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՐՏԻ 2026թվականի N 410

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ՔԱՂԱՔ ԻՋԵՎԱՆ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.0522ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՍՐՃԱՐԱՆ-ԲԱՐԻՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտություն է առաջացել Տավուշի մարզի Իջևան քաղաքի Երևանյան փողոցում գտնվող 0.0522հա /վկայական ...վ 2073094/ հողամասում կառուցված սրճարան-բարին տալ հասցեավորում:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Տավուշի մարզի Իջևան համայնք, քաղաք Իջևան Երևանյան փողոցում գտնվող 0.0522հա մակերես հողամասում կառուցված սրճարան-բարին /վկայական՝ 2073094/ տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, քաղաք Իջևան, Երևանյան փողոց, 139 սրճարան:

2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

...ՄԱՐՏԻ 2026 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՐՏԻ 2026թվականի N 411

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԱՉԱՋՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.145 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԵՎ 11-013-0115-0004 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԵՎ ԿԻՑ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին են դիմել քաղաքացիներ Ծովինար Ռաֆիկի Թամրազյանը, Նորայր Սամվելի Մխիթարյանը, Վարդանուշ Սամվելի Մխիթարյանը, Սուսաննա Սամվելի Մխիթարյանը Տավուշի մարզ, Իջևան համայնք, Աչաջուր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող և ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող 0.145 հա մակերեսով հողամասին, բնակելի տանը և կից օժանդակ շինություններին հասցեավորում տալու խնդրանքով /ծածկագիր 11-013-0115-0004, վկայական՝ 23102023-11-0021/:

Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Տավուշի մարզ, Իջևան համայնք, Աչաջուր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.145 հա մակերեսով հողամասին, բնակելի տանը և կից օժանդակ շինություններին /ծածկագիր՝ 11-013-0115-0004, վկայական 23102023-11-0021/ տալ հետևյալ հասցեավորումը՝ Տավուշի մարզ, Իջևան համայնք, գ. Աչաջուր, 19-րդ փողոց, 9 բնակելի տուն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

05 ՄԱՐՏԻ 2026 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՐՏԻ 2026թվականի N 412

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԱՉԱՋՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.076 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԵՎ 11-013-0114-0010 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին են դիմել քաղաքացիներ Ծովինար Ռաֆիկի Թամրազյանը, Նորայր Սամվելի Մխիթարյանը, Վարդանուշ Սամվելի Մխիթարյանը, Սուսաննա Սամվելի Մխիթարյանը Տավուշի մարզ, Իջևան համայնք, Աչաջուր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող և ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող 0.076 հա մակերեսով հողամասին հասցեավորում տալու խնդրանքով /ծածկագիր 11-013-0114-0010, վկայական՝ 23102023-11-0016/:

Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Տավուշի մարզ, Իջևան համայնք, Աչաջուր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.076 հա մակերեսով հողամասին /ծածկագիր՝ 11-013-0114-0010, վկայական 23102023-11-0016/ տալ հետևյալ հասցեավորումը՝ Տավուշի մարզ, Իջևան համայնք, գ. Աչաջուր, 19-րդ փողոց, 8 հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

**ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

05 ՄԱՐՏԻ 2026 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՐՏԻ 2026թվականի N 413

### ՏԻԳՐԱՆ ԱԶԱՏԻ ՋՈՒԼՀԱԿՅԱՆԻՆ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևան քաղաքի Արցախյան փողոցի թիվ 8 տնակի բնակիչ Ազատ Ջուլհակյանը և Գայանե Գրիգորյանը/քաղաքացիական ամուսիններ/ դիմել են համայնքի ԽՀՄ-ին՝ խնդրանքով իրենց մանկահասակ որդի Տիգրան Ազատի Ջուլհակյանին /ծնված՝28.04.2020թ./ տեղավորել երեխաների շուրջօրյա հատուկ հաստատությունում:Նրանք պարզաբանում են, որ երեխան ունի լուրջ առողջական խնդիրներ, հատուկ կարիքներ խնամքի,դաստիարակության հետ կապված և իրենք չեն կարողանում հոգալ այդ կարիքները:Համայնքի ԽՀՀ անդամների կողմից իրականացվել է ընտանիքի վերաբերյալ ուսումնասիրություն և պարզել, որ ծնողները չեն տիրապետում հատուկ կարիքներ ունեցող երեխայի ծնողավարման, կենցաղավարման հմտությունների և երեխայի լավագույն շահերից է բխում նրան տեղավորել մասնագիտացված խնամք իրականացնող շուրջօրյա հաստատությունում:

Հիմնվելով Իջևան համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 02.03.2026թ-ին կայացած նիստի դրական եզրակացությունից, ղեկավարվելով ՀՀ «Ընտանեկան օրենսգրքի» 109, 110-րդ հոդվածներով ,ՀՀ կառավարության «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց կենտրոնացված հաշվառման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2003թ. հուլիսի 23-ի թիվ 917-Ն որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին,, թիվ 962-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Իջևան քաղաքի Արցախյան փողոցի թիվ 8 տնակ հասցեում հաշվառված Տիգրան Ազատի Ջուլհակյանին/ծնված՝28.04.2020թ./ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա վերցնել սկզբնական հաշվառման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

05 ՄԱՐՏԻ 2026 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՐՏԻ 2026թվականի N 414

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.17925ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել Սերոբ Ավալյանը, Տավուշի մարզ, Իջևան համայնք, Ակնաղբյուր գյուղի վարչական սահմաններում գտնվող 0.17925հա մակերեսով հողամասին հասցեավորում տալու խնդրանքով /ծածկագիր 11-006-0004-0001/:

Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Տավուշի մարզի Իջևան համայնքի Ակնաղբյուր գյուղի վարչական սահմաններում գտնվող, 0.17925հա մակերեսով հողամասին /ծածկագիր 11-006-0004-0001/ տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Ակնաղբյուր, 1-ին փողոց, 27/1 հողամաս:

2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

**ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

05 ՄԱՐՏԻ 2026 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ